econews.am

Ելք – EN/178

Վայոց ձորի մարզպետ

Արարատ Գրիգորյանին

EcoNews.am բնապահպանական տեղեկատվական կայքի խմբագիր

Մարիամ Տաշչյանից

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Գրիգորյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ տրամադրել տվյալներ Վայոց ձորի մարզում «Բեզոար» բնապահպանական հիմնադրամի կողմից վարձակալված հողատարածքների մասին: Խնդրում եմ մանրամասնել.

- Ո՞ր գյուղերի տարածքում են դրանք գտնվում, դրանց տեղադիրքը և մակերեսը, քանի՞ տարով է վարձակալած և այլ մանրամասներ:
- Ի՞նչ նպատակներով են օգտագործվում նշված տարածքները:
- Արդյոք «Բեզոար» բնապահպանական հիմնադրամն ո՞ւնի գնած հողեր Վայոց ձորի մարզում

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

EcoNews.am բնապահպանական տեղեկատվական կայք
Հեռ.՝ 098 50 99 39
Հասցե՝ Վարդանանց 20, բն. 1
Էլ. Հասցե՝ info@econews.am

Հ. Հ. ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
Մուտքի թիվ 9153
25 11 2021թ.

econews.am

(Պատրաստ եմ վճարել տեղեկատվության պատճենահանման ծախսերը):

Կանխավ շնորհակալ եմ՝

Կայքի խմբագիր՝

Տաշչյան Մարիամ Հակոբի

24.11.2021թ.

EcoNews.am բնապահպանական տեղեկատվական կայք
Հեռ.՝ 098 50 99 39
Հասցե՝ Վարդանանց 20, բն. 1
Էլ. Հասցե՝ info@econews.am